



ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆԸ

Մեծ պահք է, ապաշխարության օրեր: Կրոնական հատուկ պաշտամունքների, արարողությունների, սուրբ գրական խորիմաստ ընթերցումների խորհրդավոր, արտագրավ և ուսանելի շրջանն է, երբ մեր եկեղեցին հրավիրում է հավատացյալներին ինքնամոխիման, հոգևոր խոկմունքների, ժուժկալության, աղոթքի և ապաշխարության:

Այս մտածումների լույսի տակ, Վեհափառ Հայրապետի թելադրությամբ, հոգևոր ճեմարանի հարկի տակ մարտի 10-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 19-ին, կազմակերպվում է ս. Գրիգոր Նարեկացու կյանքին և ստեղծագործությանը նվիրված գեղարվեստական երեկույթ:

Մայր տաճարում երեկոյան խաղաղականի և հսկումի սրբազան արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետը տ. Հայկազուն, տ. Սերովբե և տ. Հուսիկ սրբազանների ուղեկցությամբ առաջնորդվում է ճեմարան՝ նախագահելու մարեկյան երեկույթին, որին ներկա են նաև ճեմարանի դասախոսներն ու Մայր Աթոռի միաբանությունը:

Երեկույթը բացում է ներածական խոսքով հոգևոր ճեմարանի տեսչի պաշտոնակատար տ. Հովհաննես քհն. Մարությանը:

Հոգևոր ճեմարանի վերակացու և Ա ու Բ դասարանների գրաբար լեզվի դասատու Հակոբ սրկ. Նալբանդյանը գրավոր իր ելույթում ներկայացնում է ս. Գրիգոր Նարեկացու ապրած ժամանակաշրջանը և ապա համառոտ գծերի մեջ՝ Նարեկացու կենսագրությունը:

«Նարեկացու ապրած ժամանակաշրջանը համընկնում է Հայաստանում 100-ամյա խաղաղության և շինարարության բուռն վերելքի ժամանակաշրջանի հետ: Աշոտ Երկաթի եղբայր Աբաս թագավորը (929—953 թթ.) կարողանում է երկրում խաղաղություն հաստատել: Նրա օրով շինվում են հոգևոր եղբայրանոցներ: Կրոնավորական-շինարարական գործը շարունակվում է նաև Աբասի հաջորդ, նրա որդի Աշոտ Գ-ի օրով (953—978 թթ.):

Ժ դարում, խաղաղության այդ պայմաններում, Հայաստանում կառուցվում են մի շարք վանքեր՝ Տաթևը, Աղթամարը և Նարեկա վանքը:

Այս շրջանի իշխող ոգին հիմնականում կրոնական էր: Մարդու իսկական հայրենիքը համարվում էր հանդերձյալը: Այս դարում վանականները նվիրվել էին դպրության, գիտության և ապրում էին շատ ժուժկա կյանքով, իրենց անձը բազում գրկանքների էին ենթարկում. գիշերներն ամբողջ հսկումով էին լուսացնում. «Գործել և զԴաթեան նուագան հնչեցուցանել ի գիշերի և ի տըռնեջեան», ինչպես ասում է ժամանակակից պատմիչ Ասողիկը:

Կային և վանականներ, որոնք չէին բավարարվում միայն խստամբեր ճգնությամբ, այլ թողնում-հեռանում էին լեռներն ու անտառները և հսկումով ապրում. «Մեռեալ ի կենդանութեան և ի մահու գլեանս քարոզեալ», ասում է Ասողիկը: Իսկ ըստ Նարեկացու՝ «վերնականների հետ խոսակից լինելով»: Մ. Աբեղյանն այս մասին գրում է. «Դա արդեն միստիցիզմ էր, կրոնական ֆանտազիայի բնագավառն իր տեսիլներով ու հա-

փրշտակությամբ, երբ մեմակյացներն ու վանականներն իրենց խուցերում հավատում էին, թե հաղորդություն, հաղորդակցություն են ունենում ֆրեշտակների, նույնիսկ Աստուծո հետ, տեսնում են նրանց, խոսում նրանց հետ և լսում նրանց ձայնը» (Մ. Աբելյան, Դ հատոր, էջ 570): Այդ ճգնափոր-միայնակյացներից է եղել նշանավոր գիտնական, քանաստեղծ ա. Գրիգոր Նարեկացին, Նարեկա վանքի պարծանքը ու պսակը:

Գրիգոր Նարեկացին ծնվել է 951 թվականին և սրբությամբ ապրել ու մեծացել Նարեկա վանքում: Նրա հայրը՝ Խոսրով Անձնացի եպիսկոպոսը, նրան փոքր տարիքից տալիս է Անանիա Նարեկացուն, որի եղբոր դստեր որդին էր Գրիգորը: Նարեկացին ունեցել է երկու եղբայր՝ Հովհաննես և Սահակ: Վերջինիս մասին ոչ մի հիշատակություն չունի իր գրվածքներում: Սակայն իր ավագ եղբոր՝ Հովհաննեսի մասին մեծ գովեստով է խոսում. «...որ գիտնականն է և հանճարեղ իմաստասեր, քան զիս առաել լամենայնի»:

Նարեկացին հազվադեպ հանդիպում էր իր հորը. իսկ մայրական սեր ու խնամք ոչ տեսել էր և ոչ էլ ճաշակել: Վանքում նրա ուսումնառության հիմնական առարկաները եղել են ա. Գիրքը, եկեղեցու մեծ հայրերի գրվածքները: 977 թվականին ձեռնադրվում է վարդապետ: Ապրելով Նարեկա վանքում, նա ինքն իրեն զանազան ճնշումների ու խստությունների է ենթարկում: Տերեկ ու գիշեր պարապում է գիտությամբ և աղոթա-ացությամբ:

Գրիգոր Նարեկացին դեռևս վաղ հասակից ոչ միայն ընթերցել է, այլև շարադրել: Իր գիտնականության համար ուսուցիչ է կարգվում Նարեկա վանքում: Նա ինքն իրեն անվանում է «լեռինն վարժապետաց և կրտսերն բանասիրաց»: «Ձայլս խրատեմ և ես ինքս անփորձ եմ. միշտ ուսանիմ և երբեք ի ճշմարտություն գիտութեան ոչ հասանեմ»,—գրում է նա:

Նարեկացու կենսագրությունից էլ ոչինչ բան հայտնի չէ: Իր կյանքն անց է կացրել վանքում գրելով ու կարդալով, խրատելով ու աղոթելով: Եվ եթե լինում էին պահեր, երբ նա հոգնում էր և վշտանում, մրմնջում էր հետևյալը. «Եթե ի տխրանաց ինչ ձանձրութենէ որ նուաղեսցի, կանգնեսցի՝ վերստին հաստարանաւ այս հառաչանաց ի քեզ յուսացեալ: Եվ ահա նոր թափ ու եռանդ ստացած, ոգևորված ու խանդազին, վերստին նվիրվում էր իր աշխատանքներին:

Գրիգոր Նարեկացին վախճանվել է 1003 թվականին, 52 տարեկան հասակում: Նա

թաղվել է Նարեկա վանքում, ա. Սանդուխտ կույսի եկեղեցու մոտ՝ ըստ «Յայամաւորք»-ի:

Նարեկացին իր օրով իսկ սրբացել էր ժողովրդի կողմից: Հետագայում, մահից հետո, ժողովուրդը զանազան գրույցներ, պատմություններ է հյուսել նրա սրբության և գիտնականության մասին, որոնք ավանդաբար հասել են մեզ Նարեկացու վարժագրություններում: Հիրավի ժողովուրդը նրան «հրեշտակական» է կոչել: Նարեկացին իր երկրավոր կյանքի կատարելությամբ ու մարդկային ցերեղությունությամբ երանական տեսության է արժանացել: Նարեկացու գլուխ-գործոցը՝ «Նարեկ»-ը, հայ ժողովրդի համար աղոթքի գերագույն ու ամենամկիրական գիրքն է Ավետարանի կողքին»: Նարեկացին Աստծուն է տեսել:

Գ լսարանի ուսանող Ժիրայր սրկ. Սիմոնյանը հանդես է գալիս Նարեկացու մատենագրական վաստակին նվիրված գրավոր զեկուցումով:

«Յուրաքանչյուր հեղինակի գործ լավ հասկանալու համար անհրաժեշտ է ծանոթ լինել նրա ապրած ժամանակաշրջանին, որովհետև յուրաքանչյուր գրող նաև իր դարաշրջանի արդյունքն է:

Նարեկացու ապրած դարում մարդու բուն հայրենիքը համարվում է երկինքը: Մարդը դրան հասնելու համար հակադրվում է իր մարմնին: Որքան ավելի մարմինը զրկանքների էր ենթարկվում, այնքան հզորանում էր հոգին:

Հոգու այս պայքարը մարմնի դեմ իր գործնական արտահայտությունը գտավ ամենից առաջ վանական և ճգնափորական կյանքում:

Ա. Գրիգոր Նարեկացին այս պայքարի արտահայտիչն է իր մատենագրական վաստակի մեջ: Նարեկացին բյուրեղացումն է մի ամբողջ դարաշրջանի և արտահայտությունը՝ իր ժամանակի ըմբռնումի ու հոգեբանության:

Նարեկացուց մեզ հասել են բազում գործեր, որոնց մեջ նշանավոր է «Մատենան ողբերգութեան»-ը: Նարեկացին երկար տարիներ որոնում է տեղորոքներ, հավաքում ու ամբողջացնում այն ամենը, ինչ որ հետագայում դառնում է «Մատենան ողբերգութեան»:

Կարդալով «Մատենան ողբերգութեան» գործը, մեր առջև հառնում է խորապես հավատացյալ միջնադարի առաքինի մարդը, համոզված հոգևորականը, որի ստեղծագործության մեջ մենք զգում ենք պոթելագող տաղանդի անբավ մեծությունը, ճշմարիտ հավատքի մշտավատ հրդեհը, անմեղ հոգու պաղատագին հեծեծանքը:

«Մատենան ողբերգության» գործի գլխավոր առանցքը, որի շուրջ պտտվում է բարդ, քնարական ու պոետիկ մտային, խորը ներքին բովանդակությունը, դա մարդն է ու նրա փրկության հարցը:

Նարեկացին երկինք ձգտող մարդն է, որն ամեն րոպե փորձում է թռչել դեպի վեր, դեպի կատարելություն և Աստված, բայց խփվում է մարմնին, փշուր-փշուր լինում ու թափվում ցած, գալարվում է, մոռնում, արտառվում: Հաճախ էլ հաշտվում է իր վիճակի հետ, բայց երկար չի կարողանում հաշտ ապրել, նորից է հարձակվում մարմնի վրա, մարմինը տեղի չի տալիս, դիմադրում է, ու շարունակվում է այս պայքարը, անվերջանալի պայքարը, որը և դառնում է «Ողբերգություն»: Նա իր հոգում կրում է հավատալիք ու միևնույն ժամանակ հոգիներ. նա միավորումն է ամբողջության, միացած ամբողջությամբ: Այդ պատճառով Նարեկացին մարդկային բոլոր մեղքերը համարում է իրենը և պատրաստ է զոհվելու հանուն մարդկության փրկության: «Ոչ ոք մեղադր իբրև զիս, ոչ ոք անօրէն, ոչ ոք ամբարիշտ, ոչ ոք անիրաւ, ոչ ոք չարագործ... Ես միայն և այլ ոչ ոք, ես ամենայն և ինչ ամենեցուն» (Բան ՀԲ):

Նարեկացու համոզմամբ փրկությանը կարելի է հասնել միայն մեղքի գիտակցությունը ունենալու դեպքում, քանզի «առանց մեղքի գիտակցության չկա արքայություն»:

Անսահմանափակ երևակայությունից է բխում նաև նրա խոսքի գյուտերի առատությունը և պատկերների հսկայական շարանը: Նրան չեն բավարարում հայոց լեզվի բառերը: Իր երևակայությանը մարմին տալու համար նա հաճախ ինքն է ստեղծում նոր բառեր, օգտվում բարբառներից:

Նրա պատկերները հուզիչ են, քնարական, հաճախ ահարկու: Նարեկացին դրանք մեզ ներկայացնում է շոշափելիորեն և տեսանելիորեն կենդանի, որովհետև ինչ որ գրում է, այդ ամենը տեսնում է, զգում ու ապրում:

«Բայց քանզի ձայնդ ահաւոր դատաստանիդ հատուցման ուժգինս հնչեցեալս ի ձորն վրեժխնդրութեան, կրկինս ինձ երկնէ մարտից յարուցմունս, այժմէն գուշակեալ շարժմունս յուզմանց ներհակականաց, որ յիմունս անձին ցուցանի» (Բան Ա):

Ուշագրավ է նաև այն պարագան, որ մինչև Գրիգոր Նարեկացի մեր քրիստոնեական շրջանի գրականության մեջ աշխարհը իր գեղեցկություններով հանդես չի եկել: Բրիստոսը շատ է սիրել աշխարհը, բնությունը, լեռն ու ձորը, ծառն ու ծովը: Նարեկացու մոտ վերականգնանում է աշխարհը

և դառնում ստեղծագործության նյութ: Նարեկացու Աստվածածինը ինչ որ մի ցնորք է կամ վերացական պատկեր, այլ կենդանի է, շնչում է ու «թիկնեթիկն ճեմում»:

Նարեկյան Տիրամայրը՝

«Հրեշտակ է ի մարդկանէ.

Մարմնատեսիլ Բերուլթէ,

Երկնատր արքայուհի,

Անխառն իբրև զօր,

Մաքուր որպէս յոյս,

Անշաղախ քստ նմանութեան

Պատկերի արուեստին բարձրութեան»:

Նարեկացին իր հանճարով մեր հոգևոր բանաստեղծությունը բարձրացրեց մի նոր որակի՝ իր մեջ ընդգրկելով այն ամենը, ինչ որ կար իրենից առաջ և այնպիսի ինքնուրույնությամբ, որին դեռ ոչ ոք չի կարողացել նմանվել»:

Այնուհետև հանգչում են դահլիճի վատ լույսերը:

Բեմի խորքում, մի մեծ սեղանի շուրջ, նստել են չորս ասմունքող մոնագներ, տ. Գրիգորիս արեղան, Կտրիճ, Սեզար ու Արտաշես սարկավագները:

Աղոթքի, հսկումի պահն է խորհրդավոր ու հոգեշեն, մթնոլորտը՝ արտագրավ, որը մղում է մտամոլորման, հոգեղից խոկմունքների: Բոլորի մտածումի առաջ կենդանանում է Նարեկա վանքի մեծ աղոթողի և հսկողի արտառույց կերպարը... Դահլիճն ու հոգիները լցվում են «ի խորոց արտի խօսք ընդ Աստուծոյ» նարեկյան աղոթքով...

Էլեկտրական դողդոջուն և թույլ կերոնների առաջ, որոնք վանական հին խցիկներում արկաշոժող մոմերի տպավորություն են թողնում, ասմունքողները, գիշերային խաղաղության և լույթյան մեջ գլուխները հակած՝ կարծես մագաղաթյա հին-հին, բայց միշտ թարմ ու ժամանակակից նարեկյան էջերից ընթերցում են Վեհափառ Հայրապետի ընտրած հատվածները:

Ստորև մեր ընթերցողներին ենք ներկայացնում որոշ մասեր «Մատենան ողբերգություն»-ից:

*
*
*

Հնչում է ահա ուժգնապես ձորում վրեժ-խնդրության՝

Չայնը ահավոր քո դատաստանի,
Երկնելով իմ դեմ նորից մարտերի գրգիռ ու պոռթկում.

Այժմ իսկ զգում եմ արդեն անձիս մեջ
Տագնապախտով ալեկոծումներ ներհակ ուժերի,

Եվ չար ու բարի խորհուրդներն ահա
խմբված բազմությամբ,
Սպառազինված գեներ ու սուներով՝

Բախվում են իրար ոտխների պես,
Դարձնելով համակ ինձ մահվան գերի...

Բան Ա, Բ

* *

Եթե վշտերից լքված, հոգնաբեկ՝ մեկը
նվաղի,

Թող ամրապնդված հառնի վերստին
Հառաչանքների այս հաստարանով՝ հու-
սալով ի քեզ:

Եթե ամբարտակն ապոհավության մեղ-
քով խորտակվի,

Թող որ քարերով այս, շնորհաձիր
Աջովդ հարմարված, կառուցվի դարձյալ:

Եթե հանցանքի սուսերով հույսի լարը
կտրվի,

Ամենակալիդ քարեհաճությամբ՝
Ամուր պատվաստմամբ՝ թող կցվի նորեն:
Եթե հոգեկան մահաբեր մի ցավ պաշարի
մեկին,

Թող որ սրանով, աղոթելով քեզ,
Ստանա կյանքի հույս ու փրկություն:

Թե տազնապահար ու տարակուսված
խոցոտվի մի սիրտ,

Սրանով փրկված՝ թող ապաքինվի՝ մեծիդ
քաղցրությամբ:

Թե անքավելի մեղանշումներից մեկը
կործանված՝

Ընկղմված լինի խորքն անդունդների,
Թող որ այս կարթով դեպի լույս ելնի՝ քո
աջակցությամբ:

Եթե մորիկը անօրինության խորտակիչ
հողմի

Աշխարհիս ծովում մարդու մարմնեղեն
Շինվածքն հարվածի ալեբախությամբ,

Թող որ խաղաղվի կրկին այս դեկով՝
ուղղված դեպի քեզ:

Բան Գ, Գ

* *

Ավելի լավ չէ՞ր, ինչպես որ գիրքն է ասել
նախօրոք,

Ո՛չ սաղմնավորվել բնավ արգանդում,
Ո՛չ ձևավորվել որովայնի մեջ,

Ո՛չ ծնունդ առնել, ո՛չ լույս աշխարհ գալ,
Ո՛չ մարդկանց թվում երբևէ գրվել,

Ո՛չ հասակ առնել, աճել, զարգանալ,
Ո՛չ գեղապատկեր դեմքով զարդարվել,

Ո՛չ օծովել խոսքով, բանականությամբ,
Քան թե ենթարկվել այսքան սաստկա-
գույն

Ու սարսափելի տառապանքների,
Որոնց դիմանալ կարծրակրփ ժայռերն

անգամ չեն կարող,
Ո՛ր մնաց տկար մարմինները լուծ:

Բան, Դ, Բ

Զի եթե մի լիճ, ծովերը նույնիսկ թանաքի
փոխեն

Կամ բազմասպարեզ դաշտերը իրենց
Անահմանությանը դարձնեն մագաղաթ

Եվ եղեգների շամբ ու պուրակներն, ան-
տառները ողջ

Կտրելով միայն գրիչներ շինեն,
Դարձյալ չեն կարող բարդվածս անթիվ

անօրինության
Մի չնչին մասնիկն իսկ գրի առնել:

Նաև եթե ողջ մայրի անտառները կիթա-
նանի

Զողելով դարձնեն կշեռքի լծակ
Եվ մի նժարին իբրև կշռաքար

Արարատ լեռը դնելու լինեն,
Դարձյալ չի կարող նա իր ծանրությամբ

Իջնելով հասնել, համագուգակցել ու հա-
վասարվել

Մյուս նժարի հանցանքներիս հետ:

Բան Թ, Ա

* *

Ինչպե՞ս համարեն ես ինքս ինձ մարդ,
Երբ կարգն եմ դասված տմարդիների.

Կամ ինչպե՞ս պիտի բանական կոչվեմ,
Երբ հիմարությամբ իմ՝ անբանների

կցորդն եմ միայն.
Ինչպե՞ս կարող եմ անվանվել տեսնող

Ես, որ իմ ներքին լույսերն եմ մարել.
Եվ ինչո՞ւ պիտի ունենամ համբավ զգա-
լականի,

Երբ իմացության դռներս եմ փակված.
Ինչո՞ւ կարող եմ ցույց տալ ինձ որպես

անեղծի տիպար,
երբ անձնասպան եմ եղել հոգեպես:

Բան ԻԱ, Գ

* *

Ես, որ խոնարհված՝ երկրին կառչեցի
Եվ անասնական գետնաքարշությամբ՝

Սողալով նվաաստ մի սողունի պես՝
Կամովին ինքս ինձ զամեցի կյանքին այս

կորստական,
Ահա ծնկաչոք կույ չեկած մեծիդ քաղցրու-
թյան առաջ՝

Փովում եմ գետնին, որ պատկերեն քեզ,
Թե ինչպես եմ արդ ի մահ գլորվում:

Բայց ապավինած վերստին քեզ, տե՛ր,
Ասես թե կյանքի հաստատուն նեցուկ մի

գավազանով,
Որ ընձյուղված է Դավթի արմատից

Եվ անճառորեն շաղկապված անեղ քո
աստվածության,

Պիտի կիսովին բարձրանամ ոտքի՝



Երախտիքներից քո ամոթահար, գետնա-
հասկ դեմքով,

Աչքերս հառած քո բարձունքներին,
Խղճալի հապացք ուղղած դեպի քեզ
Ու լինը լույսիս լցրած արցունքով,
Ո՛վ ողորմություն, քաղցրություն համակ,
Որ կարեկից ես բոլոր վշտերին,
Հույսի պաղատանք սուսաբելու քեզ...

Բան ԼԲ, Բ

Ինչպես մի օտար իմաստասերի
Բարվոք թվաց չար համարել մահը,
Եթե գիտակցված, հասկացված չէ այն,
Ես էլ իմ խոսքով նույնն եմ հաստատում.
Քանզի անգգա անասունի պես
Մեռնում ենք և չեն զարհուրում,
Կորչում ենք և չենք սարսափում,
Թաղվում ենք և չենք խնայարկում,
Տարագրվում ենք և չենք տագնապում,
Եղծվում ենք և չենք ափսոսում,
Մաշվում ենք և չենք գիտակցում,
Խամրում ենք և չենք սթափվում,
Գնում ենք, չենք զգուշանում,
Գերվում ենք ու չենք էլ զգում:
Իսկ երանելի Հոբն համարում է մարդու
մահն հանգիստ.

Ես էլ սրբի հետ նույնը կասեի,
Եթե մահացու գործերի բեռը
Այսպես ծանրացած չլիներ վրաս.
Նամանակակո ուր որոգայթը խիստ
գաղտնի է, իսկ իր
Հնարադիրը աննկատելի.

Ներկան անգո է, անցյալը՝ անհայտ, գա-
լիքն՝ անստույգ,
Ես անհամբեր եմ, իսկ բնությունս՝ խիստ
թերահավատ,
Ոտքերս՝ անհաստատ, մտքերս էլ՝ ցնդած,
Կրքերս՝ բռնավոր, քարքս՝ անժուժկալ,
Մարմինս ամբողջ մեղք է մակարդված,
կամքս՝ երկրասեր,
Հավամարտությունն էակից է ինձ, խառն-
վածքս է ներհակ,
Բնակարանս կավեղեն է, իսկ անձրևներն՝
ուժգին,
Անթվելի են իմ կարիքները, պատահար-
ներն էլ ամենագրավ,
Միտքս է չարամետ, տենչերս՝ բարյա-
յաց,
Կյանքս՝ միօրյա, զվարճություններս՝ ան-
նշան, չնչին,
Խաբվում եմ անվերջ հիմարի նման,
Խաղում եմ վրաս, ինչպես մանկական
խաղալիքի հետ,
Աշխատությունս է իզուր, ընդունայն,
Իսկ վայելքներս՝ փուչ, երազային,
Ամբարներս լոկ ոչնչով են լի, պահեստ-

ներս՝ հողմով,

Ինքս նման եմ դարձել ստվերի,
Իսկ կերպարանքս ծիծաղելի է:

Բան ԾԵ, Գ

*
*

Անպիտան եմ ես ամեն ինչի մեջ
Եվ պարսավելի՝ որքան խոսքերն
ասելու.

Ես, որ նիրհում եմ, մինչդեռ արթուն եմ,
Թմրում եմ, երբ որ զգաստ եմ թվում,
Բարեպաշտելիս գայթակղվում եմ
Եվ վրիպում եմ աղոթք անելիս.
Ընթացքիս պահին կանգնում եմ տար-
տամ,

Դեռ չարդարացած՝ նորից մեղանչում,
Դեռ չխաղաղված՝ հուզվում եմ դարձյալ,
Արշավ չսկսած, իսկույն նահանջում,
Գնալուս պահին ընկրկում եմ ետ,
Լույսն եմ պղտորում խավարի մասով,
Օշինդր եմ խառնում քաղցր համի հետ,
Բարու հիմնվածքին հյուսում եմ չարիք,
Ոտքի չկանգնած՝ ընկնում եմ կրկին:
Ծաղկում եմ, սակայն պտուղ չեմ տալիս,
Ասում եմ, սակայն չեմ անում ոչինչ,
Խոստանում եմ, քայց չեմ գործադրում,
Պարտավորվում եմ և չեմ կատարում,
Ձեռքս պարզում եմ, քայց քաշում եմ ետ:
Ցուցադրում եմ և չեմ ընծայում,
Մոտեցնում եմ, սակայն չեմ տալիս:

Բան ՀԱ, Բ

*
*

Հիշի՛ր, տե՛ր գթած և արդարասեր, Աստ-
վա՛ծ ճշմարիտ,
Ու մի՛ մոռացիր, որ իր բնությամբ
Մխավական է մարդը մշտապես,
Եվ դու ես միայն օտար խավերի ու մոլո-
րության.

Զննի՛ր ինձ դարձյալ, տե՛ս ալեխոով ար-
յան հորձանքն իմ,
Որ ծավալվում է երակներիս մեջ ամեն
ուղղությամբ.

Մոտեցի՛ր միայն ինձ որպես բժիշկ.
2Է՞ որ ես մարդ եմ, ո՛վ անգոյատե՛ս,
Որն ստեղծված է, քո վկայությամբ, թերի,
խակամիտ:

Եվ որպես մի մարդ, երկրածին մարմին
ու մահկանացու,

Ես էլ չեմ կարող մնացած լինել
Անխալական, անգայթ, անխոտոր.
Ուստի ավելի ճիշտ է ընդունել ինձ էլ մե-
ղապարտ,

Քան սուտ համարել ասածները քո.
Քանզի, արդարև, հայտնի է և քեզ,
Որ արարածը չար է էությանբ,

Որ բնածին է չարությունը մեր,
Եվ անփոփոխ են խորհուրդները մեր հա-
վիտենապես,
Ըստ իմաստունի կանխասացության:

Բան ՀԹ, Ա.

* *

Զվարթ քաղցրությամբ նայի՛ր երկնքից
Հոգնաշարչարիս ամենակործան վտանգ-
ներից, տե՛ր,
Եվ ազատի՛ր ինձ հեծեծանքներից այս
դառնակակիծ,
Հանգստացրո՛ւ, տո՛ւր անդորրություն:
Եվ վրաս խուժող գումարտակներն այս
սատակիչների,
Լինեն դրանք թե՛ նեղ, չարահնար,
Դժնի զենքերով սպառազինված
Խոլ մարտիկների գնդեր դիվական,
Թե՛ քեզ ատելի զազիի մեղքերի զանա-
զան ձևեր,
Թե՛ կորստական ու վատնիչ հետքեր
ախտ ու ցավերի,
Կտրի՛ր, հա՛ն, վանի՛ր, խափանի՛ր իս-
պառ,

Անսահմանորեն հալածի՛ր հեռու
Ու տարագրի՛ր կրկնապես, մատնած ան-
դարձ կորստյան,
Եվ կանգնեցրո՛ւ, հաստատի՛ր հրպես
կյանքի նպատակ,
Ամուր մահաբան՝ ճշանդ խաչիդ՝
Ապավինածիս փրկությամբ ի քեզ:
Մեծ ահավորիդ անպարտ, անպատիր
Ու ահադթելի հնարանքներով
Թող քանդվեն բոլոր այս գաղտնածածուկ
Որոգայթները սատանայական,
Մերկանան չարի խարդավանքները, չըք-
վեն գայթերը,
Հնարադրված թակարդներն ամբողջ լինեն
խայտառակ,

Երևան հանվեն խայծերը կարթի,
Բացվեն նեղգողի ծողակները մութ,
Եվ ծածկույթները վարմի՝ խափանվեն:
Չորանա, այրվի բույսը որումի,
Չարաքանությունը բռնավորի՝ նզովք
ստանա,
Կտրվի ի մահ որսողի լարը խաբեբայա-
կան,

Պարզվի պատրողի բանասրկությունը:
Կորչեն զենքերը զրպարտիչների,
Ընկնեն սրերը մահ տարածողի,
Չքվեն սադրողի հնարանքները,
Տագնապեցնողի կապերը քանդվեն:
Կեղծավորների սուտ կերպարանքը բուն
տեսքն ստանա,
Անպատկառների հարձակումները սա-
տիկ՝ ջախջախվեն,
Ցրվեն տարմերը ուտիճ-ցեցերի,

Ավազակների հրոսակները դառնան ցի-
րուցան,
Քայքայվեն խուժող թարբարումների խա-
ժամուժները,
Քանդվեն ամրոցներն ստամբակների,
Կանխվեն, խափանվեն լիր-լպիրների
ամպրոպներն անգուսպ,
Փարատվի տարափն աղետաբերի,
Հավվեն, ցամաքեն աղանդավորի եղյամ-
ները սառ:
Խորտակվի եղջյուրն ամբարտավանի,
Զարդվեն, մանրատվեն կեղծ դրոշների
քարձրածողերը,
Հպարտությունը ամբարիշտների կործան-
վի անհետ,
Նահանջեն մոլի հարձակումները ճակա-
տողների:

Թո՛ղ բելիարի, ինչպես անմարմին,
Նույնպես մարմնավոր, գորքերի դաշնը
քայքայվի իսպառ,
Մի ճամփով եկած՝ յոթով ետ փախչեն,
Հենց իրենք ընկնեն ինձ համար փորած
խոր գրեթի մեջ:
Անցնեն ձանձրալի ձմեռները ցուրտ,
Կտրվի կապը միաբանության
Հանապազաջան ավազակների.
Թո՛ղ շողոքորթի համբույրը շողոմ
Մակատիս միայն հարուցի նողկանք,
Դադարի նեղիչ նետարձակումը,
Խարխվի մավը խարդախողների,
Եվ առամները կծոտողների արմատից
հանվեն:

Բան Ղ, Գ.

* *

Ընդունի՛ր հյուսվածքն այս աղիողորմ հե-
ծեծանքներիս
Եվ այս բանական նվերն հոտոտի
Որպես անարյուն զոհաբերություն.
Օրհնությամբ սրբի՛ր ու մաքրի՛ր ամեն
Տառը մատյանի այս ողբերգության.
Վավերագրի՛ր, հաստատի՛ր, կնքի՛ր,
Այն որպես արձան հավիտենական՝
Ընտիր ու հաճո գործերի կարգում:
Թո՛ղ որ առջևդ լինի մշտապես
Ու լսելիքիդ հնչի շարունակ,
Խոսի շուրթերով քո ընտրյալների,
Հրեշտակներիդ լեզվով բարբառի,
Թո՛ղ տարածվի քո աթոռի հանդես
Եվ ընծա բերվի քո սուրբ սրահում,
Խնկի տաճարում անունդ կրող
Ու բուրի փառքիդ սեղանի վրա,
Պահպանվի հավետ քո գանձարանում
Եվ ամբարվի քո ստացվածքի մեջ:
Թո՛ղ որ հոչակված հասնի ազգերին,
Ժողովուրդներին քարոզվի ի յուր,
Տպվի դռներին բանականության

Եվ զգայության սերմերի վրա դրոշմվի
ամուր:
...Ու թեպետ որպես մի մահկանացու՝ պի-
տի վախճանվեմ,
Բայց այս մատյանի հարակալությամբ
կմնամ անմահ...
Բան ԶԸ, Բ

• •

Նարեկացին մեր ժամանակակիցն է: Նրա
քնարերգությունը այսօր էլ իր գեղարվես-
տական ինքնատիպությամբ, իր կենսահաս-
տատ մեծ ուժով, քրիստոնեական իր հումա-
նիզմով և ճշմարիտ լավատեսությամբ հու-
զում, դաստիարակում և բարձրացնում է
մեզ:

Նարեկացին տառապող, բայց միշտ հու-
սացող մարդկությունն է իր որոնումների և
սպրումների մեջ, մարդկային զգացմունք-
ների ամենաբազմազան երանգներով և վառ
անհատականությամբ:

Նարեկացու հիշատակին և անվանը նվիր-
ված երեկոյթը փակվում է Վեհափառ Հայ-
րապետի օրհնությամբ և պատգամով՝ ու-
ղղված ուսանողությանը:

Երեկոյթին ներկա էր նաև «Մատենան ող-
բերգություն»-ի աշխարհաբար նորագույն
թարգմանության թարգմանիչ, քաջահմուտ
գրաբարագետ և սիրված բանաստեղծ Վազ-
գեն Գևորգյանը, որին ողջունում և բարե-
մաղթության ջերմ խոսք է ասում Վեհափառ
Հայրապետը:

